

962
ԲԱՅԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5
Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6
Ամերիկա
2 Տղ. 30 սենդ
ԿԱՅԵԳԻՆ

Թերթ կը զրկուի կանխիկ վճարողներու միայն:



ՊԱՅՄԱՆՔ
Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

Ե. ՏԱՐԻ 3 ՆՎՐ. 26 ՇԱԲԱԹ 1902 ԹԻԻ 238

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Բարից 1 Փետր. 1902

Հայերեն նոր քերթ մ'ալ. — Հաստատագոյն աղբիւրներէ կիմանանք որ մէկ երկու շաբաթէն Բարիզի մէջ լոյս պիտի տեսնէ հայերէննոր հանդէս մ'ալ որ առ այժմ ամսօրեայ ըլլալու է և ժամանակէ մը յետոյ 15 օրը անգամ մը պիտի հրատարակուի: Խմբագիրներն են երկու պարոններ որոնք 15—20 տարիներէ ի վեր հայ արևմտեան գրական հրապարակին վրայ և մանաւանդ Կ. Պոլսոյ հայ մամուլին մէջ նախանձելի դիրք մը գրաւած են: Հանդէսը որ երկօրեակ և 16 էջերէ բաղկացած պիտի ըլլայ: պիտի պարունակէ միայն գրական նիւթեր, բայց զրականին բոլոր ճիւղերն: Արդէն թերթին գրեթէ կէսը շարուած է, ամբողջ առաջին թիւը լոյս կը տեսնէ հաւանաբար առաջիկայ շաբթու մէջ:

Բարեգործական ընկերութեան երեկոյթը. — Բարիզի հայոց Բարեգործական ընկերութիւնը կը պատրաստուի առաջիկայ մարտ ամսու մէջ երեկոյթ—պարահանդէս մը տալու, ի նպաստ Բարիզ եկող—գացող հայ կարօտեալներուն: Կիմանանք թէ արդէն մի քանի բարձր անձնաւորութիւններ իրենց հովանաւորութիւնը խոստացած են այդ երեկոյթին յաջողութեան համար: Արդէն յատուկ մասնախումբ մ'ալ կ'ազմուած է հայ և ֆրանսացի անձնաւորութիւններէ որ մասնաւորապէս այդ երեկոյթի կազմակերպութեամբ

պիտի զբաղին: Կը մաղթենք որ անցեալ տարուան յաջողութիւնն ունենայ այս տարուան երեկոյթն ալ:

Արձաններու շարք մը. — Բարիզ քաղաքը մէկ քանի ախտաւոր մէջ պիտի տեսնէ կարգ մը արձաններ որոնք պիտի կանգնուին Պրանսայի ամենափայլուն երեք դրողներուն յիշատակն անմահացնելու համար: Այդ երեք անմահանալիներն որք արդէն իրենց մեռնելէն և նոյն իսկ կենդանութեան ժամանակէն ի վեր անմոռանալիներ եղած են, հետեւեալներն են, Վիկտոր Հիւկո, Հոնօրէ Պալլադ և Ալֆրէտ տը Միւսէ:

Վիկտոր Հիւկոյ արձանին բացումը տեղի պիտի ունենայ Փետր. 26ին: Որովհետեւ նա ծնած է 1802 Փետր. 26ին, այս տարի միևնոյն թուականին Բարիզ և ամբողջ Պրանսա պիտի տեսնէ մեծ բանաստեղծին թէ հարիւրամեակը և թէ անոր փառաւոր արձանին բացումը: Պաշտօնական տօնը տեղի պիտի ունենայ Պանդէոնի մէջ ուր կը գրտնուի բանաստեղծին գերեզմանը. երկու գլխաւոր ճառեր պիտի խօսուին մին ֆրանսական կառավարութեան կողմէ և մյուս ֆրանսական Կաճառի կողմէն: Յետոյ երգեցողութիւն, նուագածութիւն, արտասանութիւն ևն:

EST-OUEST ՍԵԼԻՔ Ս. ԴԱԻԹ-ԲԷԿ

Վերջերս Արմաշի մօտերը Խաչ-գիւղ անունով նոր գիւղ մը հաստատուած է, որուն եկեղեցին շինութեան համար բարեբար հանգիստացած է Տիար Խաչիկ Խօրասանճեան: Արմաշի փոխվանահայր Եղիշէ Եղիսկ. Դուրեան Ս. Խաչ անունով մկրտեք է այդ միևնոյն Խաչ-գիւղի եկեղեցին անունը:

ՊՈԼՍԱԿԱՆ ԲԱՐՔԷ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԽՕՍԲԵՐ

«Մօրաֆրոջը տունը մնաց այս գիշեր»

Երբ բաղդը ժպտելով ձեր վրայ, օր մը երջանկութիւնը ունենաք հիւրընկալութեամբ այն յարկերէն միայն մէջ որոնց դուռնէն ինծի պէս հասարակ մահկանացուները բացառաբար անցագիր մը կը ստանան միայն, պիտի լսէք վերի սովորական դարձած խօսքը:

Մեր հայ-ղայքը՝ որուն առտնին կեանքը այնքան մութ է միջակ դասակարգին, վայելչորէն զետեղուած է նախկին Գաղկեդոնի, Մօտայի յուշկապարկներով ու հուրիններով յեցուն գիցային ափանց վրայ, Մագրիգիւղի տափակ այգետաններու մէջ, և կամ Բերայի խառնակ մըթնոլորտին տակ: Ամենքն ալ իրարու նմանութիւն մը ունին, այս միջավայրերը, իրենց ընկերային կազմութեամբ և գրաւիչ, հմայիչ, գիւլթի տեղարաններու և առարկաներու զանազանութեամբ:

Շաբաթ իրիկունը կամ կիրակի, ինչպէս որ կ'ուզէք, Մագրի-Գիւղի կամ Մօտայի մեծատունի մը ապարանքին մէջ է տեսարանը. հոն ներսէն դուրսէն շատ մը տգեղ սեռէ, գեղեցիկ սեռէ ներկայացուցիչներ բոլորուած են ոչ թէ մեր գիտցած թոնիրին շուրջը «միսիր պուլտայ» ուտելու, այլ «բոքէր»ի, «պէղիկ»ի, «լուլէթ»ի, «պաքարա»ի կանանչ սեղանին շուրջը, ծխացող մթնոլորտի մը մէջ:

— Մաննիկ հանժմ, Մ. Արտաշը ակա՛ր է արդեօք:

Այս հարցումը ըրած է գուրսէն տիկին մը, տեղի տալով իր աղջկան Օր. Վերթինիի դրդումներուն, որ Մ. Արտաշէն բաներ մը կը յուսայ իր խելքով:

— Ոչ, այս գիշեր Բերա մօրքրոջը տունը հիւր մնաց. իր ընկերներէն մէկուն անուան պիտի երթայ:

Եւ կամ,

— Առտուն քանի մը այցելութիւններ կատարելու գնաց, բայց կ'երկայ թէ վերջին շոգենաւին հասած ըլլալու չէ որ չեկաւ. արդէն, եթէ շոգենաւին չկրնամ հասնիլ նէ, մօրաքրոջ տունը կը մնամ, ըսած էր մեկնելու պահուն:

Այս բացատրութենէն ետքը մանչուն հայրն ու մայրը կատարեալ անտարբերութեամբ կը շարունակեն իրենց գործը, մտքերնին զրաւուած միայն խաղով, սեղանին վրայի կարմրիկ ռակի-

ներով, որոնք կամ խոյս կուտան իրենցմէ և կամ ձգտել կուտան դէպի իրենք մակընթացութեան և տեղատուութեան մը պէս շարունակ. որպէս ծառն ի պտղոյ իւրմէ՝ ճանաչի, պտուղն ալ ծառէն կը դատուի բնականաբար:

Այս շուայտ կեանքի շառաւիղներն ալ Արտաշէն, Լեւոնիկը կամ Պաթիթը (Մկրտչի սիւլիլիպէն) ով որ ալ ըլլայ իր «թէյլէ»-ին տունը գիշերը կ'անյնէ, առանց հօրն ու մօրը գիտակցութեան՝ թէ այս կարծեցեալ թէյլէն ով է:

Չափէն աւելի չփացած, թերեւ Բարիգի, Ժընէվի, Վիեննայի պէս եւրոպական կեդրոններէ նոր դարձած և բժշկութեան, փաստաբանութեան, ճարտարապետութեան ֆուրի մը հետեւած այս պարտնները, կրնայ հասկցուիլ թէ այդ շուայտ կեդրոններուն մէջ երկրաչափութեամբ ֆուրեր կատարելէ վերջ ո՛ր աստիճան ձեռնհաս դարձած են աղտոտ մթնոլորտներու գործունէութեանց, զորս կը շարունակեն կատարել սնամիտ յաջողակութեամբ հոս ալ, Բերայի մէջ, ամէն գիշեր որ իրենց թէյլէին տունը հիւր մնան: Հիմայ որ Բերայի մէջ աղտոտ պարահանդէսներու բացումը կը տօնուի, պէտք է երեւակայել թէ այս Մ. Արտաշներու թիփերէն քանի քանիներ կը թափին հոն, հասունցած տանձերու պէս, հիւր մը նալու պատրուակաւ այն թէյլէին տունը ուր ոտք կոխած չեն, և սակայն առանց սուտ ալ խօսած ըլլալու միշտ թէյլէները պակասած չեն այս անկուտի գլուխ թեթեւակի կուտաւոր ապուշները հիւրընկալելու համար: Ասոնք կերթան հոն, ուր մութիւններու, աղտոտ բաքերու հրապոյրէն կը ձգուին, զոր ճաշակած են արդէն առտնին հեանքի մէջ, օրինակելով իրենց ծնողքէն մեծաւ մասամբ: Ասոնք իրենց կորգին «բաթիսիէն» ներդարձած են հիմա և կը շարունակեն հօրմէն, մօրմէն, ընկերային կամ հանրային մասնագիտական դպրոցներէն հասած արհեստին, ընկերութեան ազտ մը դառնալու ամէն ընդունակութեամբ:

Ով է պատասխանատուն, անշուշտ իրենց ընտանիքը: Ո՛ր հայրը կամ մայրը խորհած է, քրննած ու հասկցած է թէ ինչպիսի ընկերութեան մը մէջ կ'ապրի իր զաւակը երբ ընտանեկան յարկէն դուրս կը գիշերէ: Շատ քիչեր անշուշտ, այն ալ բացառաբար: Այս բոլորին հակառակ սակայն, կը շարունակէ մայրը զգլխել զաւակը՝ բառին նշանակութեամբ, անոր կուրստեանը պատճառ ըլլալ. կինը իր էրկան կասկածները կը փարատէ միշտ, սուտ պարագաներ ստեղծելով ի նպաստ իր չաւիին: Այս վերջինն ալ իր մայրը կը խաբէ նոյն միջոցներով, թէյլէ մը, հօրաքոյր մը, կնքահայր

մը քշելով առջին, ցայգաչը շուքներու իբր տպահովիչ բացատրութիւն:

Հայրը շատ անգամ միամիտ մը, կամ եթէ պատուախնդիր է, ընտանեկան խաղաղութիւնը չվրդովելու համար իր կնոջ բացատրութիւններուն կը ստիպուի հաւատ ընծայած ձեւանալ և յօճուիլը, այդ պետաւոր ապուշ պէպէքը, սիվիլիզէ թեթեւօլիկ զիւրպէն, որ ամբողջ կեանքին մէջ անառակ կենցաղի յարած է, կը շարունակէ իր ընթացքը հարկ եղած դրամը հայթայթելով հօրմէն, մօրմէն որ շատ անգամ թերեւ իր էրկան գրգռանէն գողնալու չափ առաջ կերթայ զաւկին բարոյական մահուան պատճառ ըլլալու համար իր իսկ ձեռքով:

Այս, իր քմահաճոյքը լրացնելու համար դժբախտական, բարոյական ամէն քաջալերութիւնը ուղղակի ծնողքէն առնող Բերայի գիշերային ժամանցներու այս ապուշ որսը, օր մը պիտի կարգուի, տուն տեղ ըլլայ, զաւակներ պիտի ունենայ, գործ պիտի կառավարէ ու ապրի ապրեցնէ. ինչ հեգնութիւն. ախտավարակ, անտարբեր, կործանած հայր մը ըլլալու կը պատրաստեն իրենց զաւակը այն հայրերն ու մայրերը որոնք ծնողական սիրոյ դէմ մեղանշել կը կարծեն հարցնել փնտռել թէ իրենց զաւակը ո՞ր թէյգէին տունը կանցնէ իր գիշերները երբ հետեւեալ առտուն դատարկ դրպանով տուն կը վերադառնայ և «թէյգէին տունը մնացի այս գիշեր», կըսէ . . .

ՕՐԵՐԸ—ԿԼԱՍ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

ԲՈԺՈՒԿԵԱՆ

Վասն

1902 թուականին մերոյ

(Շար. 236 թիւէն)

Ապրիլ 1

Տօն տխմարաց, կամկարաց և սէրսէմաց:

Դ. տարեգարձ կամաւ խաբուելոյ հաշակաւոր հրապարակագրի ուրուք, կուկո՛ւկ:

Պատմական. — 1901 չ. Զոհեր անուն հիանալի գրքէն վերջապէս օրինակ մը կը ծախուի Զորպահանէլեան գրատան միջոցաւ և հեղինակը «սառսանային ուրը կտրեցինք» ըսելով եկեղեցի կը վազէ 10նոց մօմ մը կը վառէ:

Ապրիլ 7

Տօն Ծաղկազարդի: Սկիզբն ընթերցման և վաւերացման բաժնասագրոց ի վերնատուն և ի պահարանս կանանց կողմի:

Պատմական. 1899 Պ. Բաղաբէն գողցուած գոյքերուն մէկ մասը Գառնապաթ բանայիրին մէջ կը ոկսի ծախուիլ:

Ապրիլ 14

Զատիկ. Սպասումն հաւկթաց և հաղթութից:

(Այս տարի Լատինաց գատիկը մեզի հետ չի գալուն, անանկ անցած տարուան պէս հաւկթի տառադրութիւն չպիտի ըլլայ. . . եկեղեցիներու դռներուն առջև: Եռմուրթա տօգուշու ֆրթընասը:

Պատմական. — Վերակազմեալը գիտնալով հանդերձ թէ երկու կուսակցութեանց մէջ միութիւնը անկարելի է, ժողովուրդին սիրտը շահելու և անկէ դրամ առնելու համար «Անպայման կերպով մենք պատրաստ ենք միանալ» կը յայտարարեն և այսմանօվրայով բաւական տօլար կը հաւաքեն Ամերիկայէն:

(Կեցցէ՛ անձն իմ. կե՛ր, արբ եւ օւրախ լեր, կըսէ Դաւիթ):

Ապրիլ 17

Մեծ տաղաւար յունաց որ ի սփիւռս աշխարհի. տօն Պալըգլը այազմահին:

Ճիւնիւն տէրքիւնթիւսիւ ֆրթընասը:

Պատմական. — Բարեպաշտ Զ սարաֆ մը որ եկեղեցին պատկեր մը նուիրելովը հեշաղլըգ առած կը կարծէր, խել մը անձանց գոհարեղէն և այլ ծանրագին աւանդները պօխմաւ մը ընելէ և չի ճանչցուելու համար ըթան մազերը սեւ ներկելէ վերջ, զիշերով կը փախչի յեգիպտոս. . . լեմոնաբարձ նաւով մը:

Ապրիլ 23

Ելանեն ամենայն զբօսասէրք ի զբօսավայրս. զի է խտրէլէզ: Սկիզբն ախորժեղի աւուրց սաթըճոց սուղաւաճառաց:

Պատմական. — Առնավուտօ—Հայկական կուսակցութիւնը իր կազմակերպութիւնը կը հաշակէ:

(Շար.)

ՓԻՔԻ ԹՂԹԱՏԱՐ

Հայկական Գրադարան ի նիւ Եօրք. — Գանձեցինք ու յանձնեցինք:

Տ. Ս. Փ. Պոլիս. — Թուղթին գինը բարձրացած է, չենք կրնար այդ գնով տպագրել:

ԿԻՆ, ՍԷՐ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

(Նշանաւոր դէմքերու կողմանէ գուրցուած)

Կինները՝ աւելի վտանգաւոր մարդիկը կը սիրեն, որովհետեւ կը նմանին գիշերային այն թիթեւնիկներուն՝ որոնք միշտ լուսին շուրջը կը դառնան առանց երբէք մտաբերելու թէ կրնան այրիլ:

—Մարդ՝ իր սիրելոյն թերութիւնները տեսնելու է այն աչքով, որով իր թերութիւնները կը տեսնէ:

—Իր սիրելոյն թերութիւնները չը սիրողը ճշմարիտ սիրահար մը չէ:

—Սիրահար ու սիրուհիներ իրենց թերութիւնները մեծ զգուշութեամբ կը ծածկեն իրարմէ: Դինչդեռ երկու ամուսիններ զանոնք ընդհակառակը իրարու կը ցուցնեն:

—Էրկ-մարդոց թերութիւնները իրենց խելքով, մինչդեռ կանանց թերութիւնները իրենց սրտով կը դարձանուին:

—Սիրոյ մէջ, էն մեծ փափաքներու իրականացումը՝ էն մեծ փորձանքներու աղբիւր կըլլայ:

—Բնութեան մէջ առանց փափաքի սէր չը կայ:

—Կինները՝ իրենց կարեւորութիւն չի տուող էրիկ—մարդոց գոյութեան չեն հաւատար:

—Սրտին տիրող սէրը իր բոյնէն վտարելու փափաքը կը նմանի արեւին դէմ քալել եւ ստիպել շուքը որ չերևի:

—Սիրահարները մանուկներու կը նմանին: զիրենք քնացնելու համար քիչ մը օրօր, քիչ մըն ալ փայփայանք կը բաւեն:

—Ինքզինքնին սիրահար ձեւացնողները՝ աւելի կը յաշտին, քան ճշմարիտ սիրոյ ենթակայ եղողները:

—Սիրոյ ենթակայ երիտասարդ մը իր սիրոյն համար՝ կշտամբել, հիւանդ մը իր հիւանդութեան համար՝ յանդիմանելու կը նմանի:

—Գեղեցկութիւնը՝ վաղանցիկ բուրում մը ունեցող անուշահոտութեան մը պէս է: անգամ մը որ մարդուս քիթը վարժուի, այլ ևս հոտ չ'առնէր:

—Կնոջ մը էն մեծ հարստութիւնը իր ամուսնոյն սէրն է:

—Բոլոր արարածներուն մէջ, էն ստոր կենդանիէն սկսելով մինչեւ բանաւոր կինը, մօր մը սիրտը միշտ մեծ է:


—Անկեղծ ու հարազատ սիրոյ վրայ խօսող

կիններու գրեթէ ամէնքն ալ կը նմանին այն կծծիներուն՝ որոնք մխողութեան վրայ կը ճառեն, առանց երբէք զայն դարձադրելու:

—Երկու կիններու բարեկամութիւնը՝ երրորդ կնոջ մը դէմ զինակցութիւն մըն է:

—Աւելի դուրին է համաձայնութիւն դու յացնել հարիւր էրիկ մարդու, քան երկու կիններու մէջ:

Թարգմ.



ԴԱՏԱԻՈՐ ԽԱՂՅՈՂ ԿԻՆ ՄԸ

Ալճէրիոյ քաղաքներէ մէկուն մէջ բնակող դատաւոր մը մեծ անուն հանած էր իր ունեցած ուղղամտութեան և հաւատարմութեանը համար, այնպէս որ, շատեր, մանաւանդ Մէքլէ ուխտագնացութիւն ր'ալներ իրենց ունեցած ծանրագին գոհարեղէն և աւելորդ դրամը անոր քով պահ կուտային առանց ձեռքէն մորհա՛կ կամ երկտող մը իսկ առնելու և վերադարձուն ամբողջութեամբ կը վերստանային:

Անգամ մը, աղբակիր (շօքսի) արապ մը որ յաշտած էր խնայողութեամբ հաղար դահեկան ժողովուրդ, իր գատաւորին տանելով կ'աղաչէ որ մինչև իր երկիր երթալիք օրը քովը պահէ, որպէս զի յուսկէտոս չի վատնէ կամ չի կորսնցնէ: Դատաւորը հաճութիւն տալով դրամը վար կը դնէ:

Տարի մը անցնելէն վերջ աղբակիրը կ'որոշէ իր ծննդավայրը վերադառնալ, ուստի դատաւորին ներկայանալով դրամը ետ կը պահանջէ, բայց որչափ մեծ կըլլայ իր զարմանքն ու տըխրութիւնը, երբ դատաւորը կ'ուրանայ ատանկ գումար մը առած ըլլալը, միանգամայն սաստիկ բարկացած՝ կը վռնտէ մարդը ըսելով թէ «Ես քեզի պէս աննշան աղբակիրի մը հետ երբէք դուրս ունեցած չեմ»:

Խեղճ արապը յուսահատ ետ կը դառնայ և իր ցաւը որու որ կը յայտնէ՝ ամենէն ալ անլըսելի կը մնայ, մինչև իսկ կը յանդիմանեն զինքը արդար դատաւոր մը զրպարտելուն համար: ուստի ճարահատեալ կը պարտաւորի աղբակիրի կողովը նորէն շալկած՝ տուններու աղբանոցները

մաքրել ըստ առաջնայն, միշտ հառաչելով և ախ
վախ ընելով:

Քանի մը ամիս անցնելէ վերջ, օր մը հա-
րուստ տիկին մը կը կանչէ աղբակիրը և անոր
կը հրամայէ տանը աղբանոցը մաքրելու, ու երբ
կը տեսնէ որ ասի մարդը աշխատած ատենն իսկ մեծ
մտատանջութեան մէջ է, կը հետաքրքրուի և
պտտաւոր կը հարցնէ. Աղբակիրը լալով և հառա-
չելով գլխուն եկածը կը պատմէ. այն ատեն տի-
կինը քանի մը վայրկեան մտածելէ ետքը, կը
պատուիրէ անոր յաջորդ օրը ցորեկէն մէկ ժամ
առաջ դատաւորին քով երթալ, ուր ինքը պիտի
գտնուի իրմէ առաջ, և իր ներկայութեանը դա-
տաւորէն պահանջել տուած գրամը: Հարկ չէ ը-
սել թէ աղբակիրը տիկնոջ այս հրամանը կատա-
րել խոտանալով, սուրբ զուարթ կը մեկնի:

Յաջորդ օրը տիկինը իր ունեցած գոհարե-
ղէնները ծրար մը ըրած՝ վերսյիշեալ դատաւո-
րին կը ներկայանայ, յայտարարելով որ ամուսի-
նը որ բաւական տարիներէ ի վեր պաշտօնով հե-
ռաւոր քաղաք մը գացած էր, այս անգամ նամակ
մը զրկած էր իրեն (կնոջը) որպէս զի անմիջապէս
ճամբայ ելլէ իր մօտը երթալ. ուստի ճամբորդու-
թեան մէջ այդ գոհարեղէնները վտանգէ վերծ
պահելու համար կ'ուղէր պանոնք դատաւորին քով
ձգել մինչև իրենց վերադարձը. իսկ եթէ չկա-
րենան վերադառնալ և հոն մեռնին, դատաւորը
նոյն գոյքերը աղքատաց պիտի յաւակացնէ:

Երբ դատաւորը տիկնոջ առաջարկը ընդու-
նելով գոհարեղէններու ծրարը քովը դրուած
սնտուկին մէջ տեղաւորել կը պատրաստուէր, ա-
հա աղբակիր արապը ուրախութեամբ ներս կը
մտնէ ու կըսէ դատաւորին.

— Տէր իմ, ձեր քով պահ տուած հազար
դահեկանս հաճեցէք ինձ վերադարձնել, վասն զի
եթէ Աստուած կամենայ, վաղը ծննդավայրս պի-
տի երթում:

Դատաւորը անմիջապէս սնտուկէն հազար դա-
հեկան կը հանէ աղբակիրին կը յանձնէ, հպար-
տօրէն ըսելով.

— Հրամանեցէք, առէք ձեր աւանդը զոր եր-
կու տօրիէ ի վեր պահած եմ:

Երբ աղբակիրը առած դրամները ուրախու-
թեամբ գրպանը կը տեղաւորէր, ահա տիկնոջ
սպասուհին խաղաղով խնդալով սրահէն ներս կը
մտնէ եւ կը գոչէ.

— Աչքդ լոյս, տիկին, էֆէնտի ամուսինդ
վերադարձաւ, հետեւաբար հարկ չկայ գոհարեղէն-
ներդ հոս ձգելու:

Տիկինը այս լուրէն իբր թէ չափազանց ու-
րախացած՝ կ'սկսի խաղալ. սպասուհին ալ անոր
հետեւելով կ'սկսի ցատկաւոր, աղբակիրը որ այս

դարձումքներէն տեղեակ էր, զգացած ուրա-
խութենէն ինքն ալ կ'սկսի երգել ու ցատկել:
Դատաւորը այս խաղին իրեն համար պատրաստը-
ած ըլլալը թէն կը հասկնայ, բայց յայտնի չընելու
համար (որ իրեն ստորնութիւն մ'էր) կ'սկսի ին-
քըն ալ անոնց մէջ խառնուելով խաղալ ու ցատ-
կել:

Ձայս տեսնելով տիկինը կանգ կառնու և կը
հարցնէ անոր.

— Տէր դատաւոր, ես՝ ամուսնոյս վերադար-
ձին պատճառաւ զգացած ուրախութենէս է որ կը
խաղամ. սպասուհիս ալ իր տիրոջ վերադարձին
համար կը խաղալ, իսկ աղբակիրը՝ իր դրամները
գանձած ըլլալու հրճուանքէն կը ցատկէ, սակայն
դուք ինչու կը ցատկաւոր:

Առ այս դատաւորը կը պատասխանէ. — Ախ,
տիկին, ես ալ, որ քառսուն տարուան դատաւոր
մը եմ, ասանկ խաղի մը առաջին անգամ հան-
դիպած ըլլալուս համար է որ կը խաղամ ու կը
ցատկեմ:

Կործանւի իշխեանդ

ՍԻՐՏԸ ՎԱՌԱԾ ԻՊՐԱՔՍԷ ՀԱՆԸՄԻՆ ԹՈՒՂԹԸ ԱՌ ԾԻԿ-ՍՈՒՌԱԹ ԱՆԹՈՒՍ

Օխտը ամբի է չէնքով շնորքով,
Քիթ քիթի տըւած՝ կապրէինք սիրով.
Օր մը իրարու չըսինք խառնախօսի,
Լուսի մէջ պառկի խլավուզ Արաքսի:

Տուներնուս մէջ ամենական պան
Անպակաս՝ տէյօր թէքնէյին թաբան.
Ըռաֆըս լեցուն եղջընով սապօն.
Տեսած էս աճապ էօմրիդ մէջ, թափօն:

Հէլէ թսուշիս քիլէրը տեսնես,
Պիպէռ մը քի, սանկ քէհրիպարի պէս.
Բաթիճան, հալուճ, մինինիկ խըյար,
Կեր ու խու՛մ պօլ պօլ, էին քպախթիյար:

Աստուծմէ՛ կտնաս, պէմուրատ էլլաս,
Տէր Բանըղ տէրտով գիշեր ցորեկ լաս.
Քի ինծի ասանկ տէտիրկին ըրիր,
Հախ չունի՛մ հապա, ընելու քիւֆիւր:

Քէօռ օլաճախ չուն, չիգա՛ր պաշխա մարդ,
Հարըտ առնէին, խալի՛լ էր մարդ.
Օլուխ շօճուխով բէրուշան էղայ,
Օր կըլլայ դուս ալ կը պօռաս մեղայ:

Խրժմըտանք չունի՞ս, սըյրըխ աներես,
Խուզի էրիկըս կուլիսէ կը հանես.
Ութանմատան ալ տուռ տըրացիիդ,
Օրթախն է կըսես առջի էրիկիդ.

Ի՞նչ սիրտով էլէր ժամ ալ կացեր էս,
Ձե՛ս ալ ամըշնար, հոտած տիք երես.
Սանքի կիտեռ քի ուխտի էրթալով,
Արդա՛ր պիտ' ըլլաս երկնաւորին քով:

Ձիտես նէ լսէ, լէռան եապանի,
Առըդ նամուսըդ կէտինը առնի,
Էս քու կիտցած կընկնեբէդ չեմ,
Խաֆաս տաքնայ՝նէ, թէփէթ կը խնջեմ:

Իշտէ իլք տէֆա քեզի մարդու պէս,
Նամակով կըսեմ թէքմիլ իֆատէս.
Կրնաս նէ կարդայ չէնէ կարդացուր.
Ետքէն ալ ինծի չը կտնաս խուսուր:

Ութը օր քեզի կուտամ կոր մէօհլէթ,
Աս խըտարըն ալ քեզ կօգտէ հէլպէթ,
Խառչըլըխ ճօղապ մը տաս նէ էկէր,
Վայըն ու ծունը կուլխուտ է եկեր:

Շիտակ մը կելլամ մահալլէդ կուգամ,
Իրաւ օր կընեմ քեզ ըէզիլ պէթնամ.
Ասով ալ խելքդ կըլօխըդ չիգայ,
Աւագերէցը քու հախէդ կուգայ:

ՍԷԹՕ

Կ Ս Մ Ի Թ

(Նոյնութեամբ)

Առ հարթաներքան Ս. եղանաւորն
Սուրբ մաղարախն

Ինչ՝ որ եղաւ, ինչ՝ որ անցաւ,
Այդ ամենն ինձ պատճառեց ըստ,
Բայց ես կուրցած անկեղծ սիրտով,
Ձբսի «Հաննի»-ն վատ անիրաւ:

Ասաց նա ինձ թէ՛ «կընդունիս»,
Ճակտիդ պսակ դու ընդ վեհիս.

Որով լինիս խիստ երջանիկ՝
Իբրեւ «մայա» տիեզերքիս...»:

Ա՛խ, անիրաւ, հացս ու պատիւ
Ջախջախեցիր քո կեղծ բանիւ,
Տանելով զիս տար սենեկին
Նուագներուդ նեխած լարիւ:

Ըսէ՛, անգութ, ո՞ր մէկ խօսքիդ
Վստահ գերին լինիմ՝ կամքիդ,
Քանի՛ խեղճեր զո՛հ եղեր եմ,
Լիբր ու վաւաշ անարգ կրքիդ:

Պէտք է գիտնաս ո՛վ Սանդուղնոս,
Թէ դո՛ւ, սաղրանք տաս ամենուս,
Բայց քիչ օրէն քաջ Արամազդ,
Պիտ տայ ներքեւ քեզ ոտներնուս:

Մի՛ կարծեր թէ Յունգար մէկին,
Ղրկած գինգովդ խաբես կրկին,
Ալ հաւատարմար սա... եայ... լա... յին,
Ձերթ փիլիպպեանց կեղտ խոզերին:

Բիւր առթի քեզ թղթատար... եան
Քեզմով տուներ թշուառանան,
Իժի՛ ծնունդ, դու ո՞ր խաւար
Դեհ ընկերն ես անբաժան:

Ալ ասկէ վերջ ճիշդ քեզ նման
Հուններ քո հետ ընկերանան,
Է՛հ... մենք առած օձացուպեր,
Քեզ պիտ' փշրենք վոյրի դաժան:

1902 Յունվ. 12

ՓԵՐՍՈՓՈՆԷ

Հումէն

Ա Յ Ի Ն Է Ի Լ Է Թ Ա Յ Ի Փ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ ֆգրալար վէ Հիբեայէլէր. Մալիւմա-
թը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի էյլէնճէլէր
վէ րէսիմլի Պիլմէճէլէր:


160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ
նէշը օլունան մէզբիւր քիթապըն պիրինճի ճիւ-
տի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սա-
թըլմագտա աըր Թէյ 2 ֆրանք:

ԹԵՐԹՈՆ ՀԱՅԵԼԻ (44)

ՌԷՆԷ ՏՐԻՍԵ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

ՆԱՐԵԿԱՐԻՍՏՈՒՆԵՐ



Երբ առաջատու բրձար, ձիւնաթոյր փետուրներով ալպադրոսի մը կը նմանէր ջուրերուն վրայ տատանող, շնորհիւ վշինիէ անսահման առաջատուին որով կը ծածկուէին յետնակողմը հակած երկու կայմերը: Իր առաջակողմը, նրբաձեւ կտրուած, ցոկակայմ մը կար թրուն ծայրը կը գտնուէին, ինչպէս իր կայմակալներուն վրայ, ճաճանչաձեւ կտրուած եւանկին առաջատուներ: Արտաքին կողմը սե ներկուած էր, պղնձեայ պատածքէն մինչեւ գոտինները, ոսկիի պէս փողփուլուն: Կայմերն անանկ ծեփուած էր խէժով որ կարծես արափու փայտէ էին: Խոշոր կարճ երկու թնդանոթ ունէր որք կերակային յետնակողմէն՝ ինչպէս երկու պշրուհիներ պատշգամբ կեցած, և տեղ տեղ. ելերքներուն վրայ, կէս երկոտասանեակ փոքր թնդանոթներ ամենագեղեցիկ երեւոյթով:

Էֆրէն գունակ չունէր, ոչ ալ առաջակողմի բարձրաւանդակ: Կամրջակը, հայելիի պէս միապողաղ, մէկ ծայրէն միւսը կը տարածուէր նեղ եղբրքներով որք աւելի երկայն կը ցուցունէին զայն: Յետնակողմը, դրօշները պարունակող արկղիկները և ղէկին բոլոր սարքաւորները բաւական լայն էին անկողնի տեղ ծառայելու համար, զորս կը կատարուէին վարագուրաւոր վրանները, նաւուն բոլոր երկայնութեանը վրայ:

Անոր մէջ պատելով կը տեսնուէր որ Բերքինս չաաանգամ օգտակարը զոհած էր ախորժելին. բայց հարստութիւնը շինած էր, արդէն երկար ատենէ ի վեր իբրեւ ամաթէօս կուղեւորէր: Մինակ, երկկայմին կեդրոնը, երկու կայմերուն մէջտեղը, վերապահուած էր ափիոնի բեռին: Մնացեալ մասն իրեն, իր սպաններու և իր նաւաստիներուն համար էր: Ծովու վրայ շինած էր ծածանուտ հաստատութիւն մը որ պերճանքը կը մրցեր հանգստին հետ:

Իր նաւագը կը բաղկանար երեսունի չափ հուսկու մալապարներէ որք շատ տարիներէ ի վեր հոն էին. սպալակայտը կը բաղկանար երեք Եւրոպացիներէ. Մոր-

թոն, երկրորդը, ճէյմս, տեղեկալը, և նաւագներու պես մը:

Ստիպելէ ետք տիկին լոթէրը որ նաւ ելլայ, նաւագետն անմիջապէս առաջատու պարզել տուաւ, ետեւէն քաշելով մակոյկը ուր մնացած էր դժբախտ բարեկամին մարմինը, և արեւն հաղիւ անհետացած էր Մաքսին ետեւը, երբ Էֆրէն խորիսխ նետեց լամպի փոքր ծովախորշին մէջ, այսինքն Ախթորիսէն հաղիւ յորս հինգ մղոն հեռու:

Հրամատարը, նաւուն շարժումներուն զբաղած, չէր տեսած առանցքուքի չափ նաւեր որք բացէն կուգային և կղզիին արեւելեան հրաւանդանը կուղղուէին:

Կարգ մը պատճառներով որոշած էր մինչեւ լամպերթալ փոխանակ լէնթաօ կանգ առնելու. նախ, ուղած էր այդ իրիկունն իսկ ցամաք փոխադրել Պ. Լոթէրի մարմինը: Ասկից զատ, կուգէր իր յայտարարութիւնն ընել անգլիական իշխանութեան, առանց վաղուան սպասելու: Արդէն, Չին ժողովրդեան տրամադրութիւններուն վրայ հանդէպ օտարականներուն, տեղեկութիւններ ունէր զորս պարտք կը համարէր անյապաղ ընդհանրացնել:

Ուստի փութաց փոխել իր մակոյկին նաւաստիները. վասն զի քանդոնէն լէնթէն բերած թիավարները յոգնած էին սաստիկ. վերցնել տուաւ վրանը, որ ալ աւելորդ էր. յետոյ աիկին լոթէրի, անոր ամուսնին մարմնոյն, սըր Արթուրի և Բէյ-Հօին հետ մէջը մտաւ:

Այս վերջինը հետ կառնէր որպէս զի ի հարկին իբրեւ վերջին փաստ մը գործածէ զայն Հոնկ—Քոնկի կառավարչին մօտ, իբր նաւադիղ ներկայացնելով զայն: Էֆրէնը կը թողուր Պորթոնի պահպանութեանը տակ, որ իր վստահութիւնը կը վայելէր և հարիւր անգամ ինքզինքն արժանի ցուցուցած էր:

Երբ մակոյկը երկկայմէն կը հեռանար. գիշերը շուտով վրայ կը հասնէր, բայց Բերքինս ճամբան աղէկ գիտնալուն՝ կանգ չէր առնէր: Ուղեւոր օգուտ բաղել իրիկուան հովէն որ կը զովացնէր, մակոյկը Ախթորիս ուղղեց:

Շնորհաձեւ մակոյկը թեթեւօրէն կը սահէր հոսանքներէն յուզուող ջուրերուն վրայ, և իր ընթացքին արագութեամբ մէկ ժամէն առաջ Հոնկ—Քոնկ պիտի հասնէր երբ յանկարծ այն պահուն ուր պիտի մտնար անգլիական գաղթականութիւնը կրին կղզիէն բաժնող ջրանցքը, անանկ բուռն բամի մը ծագեցաւ որ ժամանակ չեղաւ առաջատու ամփոփելու եւ կայմը խորտանեցաւ:

Նաւապետն իսկոյն հրամայեց իր մարդոցը որ զինեն թիակները: Դժբաղդաբար, մակոյկին կրած տաւանման միջոցին չորս թիակները ջուրն ինկած էին:

Սակայն նաւաստիներս առին մնացածները և սկսան ուժգնօրէն թիակարել. բայց իր առագաստէն զրկուելէն քանի մը վայրկեան ետքը մակոյկը շեղած էր. եւ մաքսախոյզը ծովուն աղմուկէն ու մեծցող ժայռին ըստուերէն, որ կարծես իր վրայ կելլար զինքը ջախջախելու. հասկցաւ իսկոյն թէ հոսանքը Լամտի ժայռերուն վրայ կը քշէր զինքը:

Արդարեւ երկու վայրկեան ետքը զգաց թէ զէկը զոր չէր ուզած լքել, անդէն կելլար, և մակոյկն իսկոյն ինքնին խրեցաւ ու հակահոսանքը խուժերուն կողմը քշեց տարաւ զայն:

— Կորսուեցանք, ըսաւ անմիջապէս՝ ամենամեծ պաղարիւնութեամբ: Ինծի թողէք այս կինը, սըր Արթուր, ես պիտի փրկեմ զայն: Դուք, բարեկամս, մինչեւ եզերք լողացէք. Դուն, Բէյ—Հօ, պէտք է որ Պ. Լոթէրին մարմինը առնես: Օ՛ն, տղաքներս, քաջութիւն և լստուծոյ ոյրորմութիւնը:

Անվեհեր նաւազն այս վերջին խօսքերը կուղղէր իր մարդոցը, բայց անոնցմէ ոչ մէկը, ոչ իսկ սըր Արթուր և նախկին ծովահէնը ժամանակ չունեցան պատասխանելու, որովհետեւ մակոյկը յանկարծ երկու երեք անգամ բախումներ կրեց և ժայռերուն վրայ ճեղքուեցաւ:

Բերքինս բազուկներուն մէջ առաւ տիկին Լոթէրը, որուն գէմքն հանգարտած էր ու գրեթէ ժպտուն՝ մահուան մերձեցումին: Կարծես խեղճ կինն իբրեւ իր վիշտին վախճանը կը նկատէր զայն:

Թէեւ իր տխուր ու ծանր բեռով բեռնաւորուած, Բէյ—Հօ ծովեղերք հասաւ սըր Արթուրին հետ, եւ կրցան երկուքն ալ օգնել նաւապետին որ ցամաք ոտք դնէ: Տիկին Լոթէր նուազած էր: Աւազին վրայ պառկեցուցին, իր ամուսնին զիպկին բովը:

Մինակ երկու մալապարներ մօտեցած էին նոյն հզերքին, բայց նաւապետը կը յուռար որ միւսները, ամենքն ալ ընտիր լուղորդներ, նոյնպէս ազատուած էին: Ուստի կուրախանար որ միայն յակոյկին կորուստովը ազատած էր այդ վտանգաւոր վիճակէն: Կարեւորը ազկից դուրս ելլալն էր:

Տեղն ուր նաւարեկները ապաստանած էին, տասը ոտք լայնութեամբ աւաղէ փոքր խուժ մըն էր, զոր ծովը բարձրացուցած էր ժայռին ստորին պատուռածքներէ մէկուն մէջ, որ ցից կը բարձրանար և անանցանելի պատի պէս կը շրջապատէր զայն:

Գիշերը վրայ հասած էր, երբեմն մութ, ինչպէս կը պատահի ցանքի այդ ժամանակներուն մէջ. Ատենատեն, խոշոր սև ամպեր մինչև հորիզոն կը տարածուէին. մերթ ալ ընդհակառակն, երկինքն աստղերով կը շողար. Բերքինս այն ատեն կրնար տեսնել Էֆլեռը երկու մղոն հեռուն, որ ջուրին վրայ կը տատանէր:

Յանկարծ թուեցաւ իրեն որ իր ոտքերուն տակ փըշրուող ալիքներուն մոնչիւնին կը խռնուէին բացէն եկած պայթիւնների: Այնչէս զրաւ՝ մահատարսուո նախազգացման ազդեցութեանը ներքեւ. Շատ չանցած հրացանաձգութիւնը աւելի շուտցաւ, աւելի բազմապատկուեցաւ. և այն ատեն զոյրոյթի աղաղակ մը արձակեց:

(Շար.)

Ծ Ա Խ Ո Խ Գ Ի Ր Ք Ե Ր

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին:

Լուսինեան, Իշխան — Ֆրանսահայ Բառարան, դին 25 ֆր. ոսկեդրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք:

Թ. Գ. Հինտլեան — Տեաւկան և գործնական փերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ուկէս ֆր.

Շէյքսբիրի Համլէթը, ողբերգութիւն, 2 50 ֆր.

Թրթուումներ (ոտանաւոր) 25 սնդ.

Հովատուն " " 25 "

Արտասուլաթոր " " 20 "

Թապալաքեալ Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ

Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1 արար 50 սնդ.

Մահճուպիյէթին միւքեաֆաթը, գոմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Գոգանճ գօճա եախօտ էնֆիյէճի, գոմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Печатница "Взаимность" — Варна